


Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ  
ՎՍԵՄ. ՆԱԽԱԳԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Կիրակի, 30 Յուլիս, պատիւ ունեցանք մեր մէջ ունենալու Հ. Բ. Ը. Միութեան նախագահ, Նորին Վսեմութիւն Տիար Ալէքս Մանուկեանը, որ Բարեգործականի յատուկ գործերով Կիպրոս եկած էր եւ ուզեր էր անակնկալ մը ընել եւ Երուսաղէմ հանդիպիլ: Յարգելի մեծ հիւրին կ'ընկերանար Մէքք Շ. Սելջօնեանը:

Նորին Ամենպատուութիւն Պատրիարք Ս. Հօր հետ կէսօրուան հաշը ընելէ յետոյ, մեծանուն հիւրը, իրեն ընկերացող փաստաբանին հետ, առաջնորդուեցաւ Ս. Յարութեան Տանարը, եւ ապա ժամը 4-ին Պատրիարք Ս. Հօր ընկերակցութեամբ մեկնեցաւ Թէլ-Աւիւի օդակայանը, անկէ մեկնելու համար Հոռոմ:

Մեր սրտագին շնորհակալութիւնը սիրելի նախագահին, ազնիւ իր այս ուշադրութեանը համար: